*զոր կարծեմ ի Տաճկաց Ամքա[յ]*[1] *կոչել, որո[յ] կշիռ սկսանի լեառն, որ կոչի Մելանա[յ] եւ ձգէ զերկայնութիւնն ի հիւսիՙսի*[2] *սակաւ ինչ զելիւք. յետ որո[յ] Եղանիտէ*[3]*, եւ կա[յ] առ լեᵃռնադաշտաւն*[4] *Երջանիկն Արաբիա[յ]*[5]*:* 202 *Ունի զԹռաթենոն գետ. աղբիւր՝ եւ ո՛չ մի*[6]*:* 203 *Եւ է վեց*[7] *մասն երկայն, եւ երկու*[8]*՝ լայն:*

204 ***ԼԱ.***[9] *Աշխարհ՝ Միջագետք, յելից Ասոր[ւ]ոց*[10]*՝ [առ*[11] *Եփրատ գետով*[12]*, եւ ի*[13] *մտից Ասորեստանի*[14]*՝ առ Դկղաթ*[15] *գետով]*[16]*, յերի Մեծ Հայոց:* 205 *Սահմանի նովաւ ըստ հիւսիՙսո[յ]*[17]*, [եւ ըստ հարաւոյ]*[18]*՝ Բաբիլոնիւն եւ Անապատᵉաւն*[19] *Արաբեաւ:* 206 *Ունի լերինս երկու*[20]*, ասէ Պտղոմէոս. զմինն կոչէ Սեգ[գ]առոս*[21]*, զոր ոչ գիտեմ՝ ո՛վ է, եւ զմիւսն կոչէ Մասիոն, յորմէ* [30ա] *ասէ երկուս*[22] *գետս բղխեալ, զ[մ]իւսն*[23] *կոչէ Քաբաուռն, զոր կարծեմ Խաբաւր*[24] *լինել (բայց սա ո՛չ ի լեռնէ, այլ ի դաշտէ բ[ղ]խէ)*[25]*, հուպ Հռաշտինա[յ]*[26] *քաղաք, որ անկանին*[27] *յԵփրատ. եւ ի համանուն լեᵃռնէ բ[ղ]խէ*[28] *Թրթար, եւ գնա[յ] դէպ ուղիղ յարեւելս, եւ միանա[յ] յԵփրատ:* 207 *Զայս երկուս*[29] *գետս գիտեմ Միջագետաց Ասոր[ւ]ոց*[30] *եւ լերինս երկուս*[31]*՝ զԿոհ-ի Շնգար եւ զմիւս լեառն երկայն, յորում՝ Մարդէ բերդ եւ Տուռադին*[32] *գաւառ եւ Բզաբդէ*[33]*. եւ երկու*[34] *այլ փոքուն[ք]*[35] *լերինք, մի՝ Ամադ, քաղաք իւր*

---

1 *S* Մաքա *փխ* Ամքա[յ] *(V. իմա՛ «Մեքքա»)*

2 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.՝ ըստ այլոց)*

3 *V-ի* Փամանիտէ-Փառանիտիս-*ին յաջորդող այս միակ երկրանուան փոխարէն համառօտն ունի խորհելու առիթ տուող այսպիսի նշում.* «եւ այլ եւս **երիս** աշխարհս *(DPv* երեք աշխարհք*)*»

4 *VS* լեառնադաշտաւն *փխ* լեᵃռնադաշտաւն *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

5 *VS* Արաբիա *փխ* Արաբիա[յ] *(վեր.՝ որպէս սեռական. Սուքրեանն այս* Երջանիկն Արաբիա-*ն ընկալել է իբրեւ յաջորդող նախադասութեան ենթակայ)*

6 *Համառօտի ընթերցումը, գուցէ եւ, աւելի տրամաբանական է՝* «**քաղաք** *(AE չիք* քաղաք*)* եւ գետ՝ եւ ո՛չ մի», *քանի որ «աղբիր» չունենալու մասին պնդումը կարող է անմիտ դիտուել*

7 *V* գ̅

8 *V* բ̅

9 *V* ի̅ը̅, *S* ԻԶ. *փխ* ԼԱ. *(վեր.՝ ըստ համառօտի)*

10 *V* Ասորոց *փխ* Ասորւոց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324. $Dv^2$-ում* Ասիացւոց *է)*

11 *DPv* եւ *փխ* առ *(AE)*

12 *DPv* գետոյ *փխ* գետով *(AE)*

13 *Pv չիք* ի *(AE) / D* թ̅ *[ՙ] փխ* եւ ի մտից

14 *AEv* Ասորեստանիւ, *D* յԱսորեստանի *փխ* Ասորեստանի *(P)*

15 *D* Դկղատ *փխ* Դկղաթ *(AEPv. հմմտ. Ե.130, 212)*

16 *VS չիք* առ Եփրատ ... գետով *(2 տող) (վեր.՝ ըստ համառօտի, որն ունի նաեւ 2* «կալով» *բառ՝ նախորդող* յելից *եւ յաջորդող* յերի *բառերից յետոյ)*

17 *V* հիւսիւսոյ *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

18 *VS չիք* եւ ըստ հարաւոյ *(պայմանական վեր.՝ ըստ բովանդակութեան, տե՛ս* հիւսիս**ոյ** ... հարա**ւոյ**. *հմմտ. ստորեւ, նախ. Ե.209)*

19 *V* Անապատեաւն *փխ* Անապատաւն *(վեր. Սուքրեանի, տե՛ս* Անապատᵉ**աւն** – Արաբ**եաւ***)*

20 *V* բ̅

21 *VS* Սեգառոս *փխ* Սեգգառոս *(վեր. ըստ Երեմեանի. Սուքրեանի ծանօթագրումն է՝* «Ոչ Սեգառոս՝ այլ *Սինգարաս* կոչէ Պտղոմէոս, եւ ցարդ եւս *Սինճար* անուամբ ծանօթ է լեառնդ եւ համանուն վիճակ, եւ նոյն որ ի ստորեւ *Կոհի-Շնգար* գրի»*)*

22 *V* բ̅, *S* երկու *փխ* երկուս *(վեր.՝ ըստ Ա.27, Բ.37 եւն)*

23 *V* զիւսն *փխ* զ[մ]իւսն *(վեր. Սուքրեանի)*

24 *V* Խաբօր, *S* Խաբոր *փխ* Խաբաւր *(վեր.)*

25 *V-ի գրիչը նախ գրել է՝* «ի լեռնէ բղխէ, այլ ի դաշտէ», *ապա մաքրել* «բղխէ»-*ն ու տարել վերջ)*

26 *S* յՌաշտինա *փխ* Հռաշտինա *(V.* հուպ-*ից յետոյ առանց* «ի»-*ի տե՛ս նաեւ վերեւում, նախ. Դ.22. Սուքրեանը ծանօթագրել է՝* «Յօր. *Հռաշտինա*»*)*

27 *VS* անգանին *փխ* անկանին *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*

28 *V* լեառնէ բխէ *փխ* լեռնէ բղխէ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 կամ 2 տող վերեւ եւն)*

29 *V* բ̅, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*

30 *VS* Ասորոց *փխ* Ասոր[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

31 *V* բ̅, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*

32 *S* Տուռապդին *փխ* Տուռադին *(V. Սուքրեանի ծանօթագրութիւնն է՝* «Յօր. *Տուռադին*»*)*

33 *Ըստ Երեմեանի ազատ վերականգնման՝ պիտի լինէր* «Բզաբդէ [քաղաք] եւ Ամիդ քաղաք, [եւ Արուաստան Մծբին քաղաքաւ]»

34 *V* բ̅

35 *V* փոքուն *փխ* փոքունք *(վեր. Սուքրեանի)*